

Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

1903 հունվար 12 Յարական կառավարության օրենքը հայ եկեղեցական գույքի և կալվածքների բռնագրավման և պետականացման մասին:

հունիս 6 Ծնվեց հայ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ Արամ Խաչատուրյանը: (Վախճ. 1978թ.-ին):

հունիս 12 Նիկոլայ II-ը հրամայեց փակել հայկական եկեղեցական ծխական դպրոցները:

հունիս 12 Նիկոլայ II-ը հաստատում է հայ եկեղեցապատկան գույքի և կալվածքների բռնագրավման ու պետականացման մասին օրենքը:

հուլիս 29 Ալեքսանդրապոլի բնակչության բազմահազարանոց ցույցը եկեղեցական ունեցվածքը բռնագրավելու դեմ:

օգոստոս 1 Ծնվեց հայ գրող Գուրգեն Մահարին: (Վախճ. 1969թ.-ին):

օգոստոս 3 Երևանի բնակչության ցույցը 1903թ.-ի հունիսի 12-ի օրենքի դեմ:

օգոստոս 4 Խրիմյան Մկրտիչ կաթողիկոսը հրամայեց Սինոդին չիրապարակել հունիսի 12-ի օրենքը:

օգոստոս 21 Խրիմյան «հայրիկը» կոնդակ ուղարկեց բոլոր թեմերին՝ եկեղեցու ունեցվածքը քաղաքացիական իշխանություններին չհանձնելու:

օգոստոս 23 Ջինված ընդհարումներ թիֆլիսում հունիսի 12-ի օրենքի կենսագործման կապակցությամբ:

հոկտեմբեր 14 Հնչակյանները մահափորձ կազմակերպեցին Գոլիցինի դեմ:

դեկտեմբեր 1 Կ.Պոլսում վախճանվեց պատմաբան, աշխարհագետ և բանասեր Մանվել Թաջունին: (Ծնվ. 1823թ.-ին):

դեկտեմբեր 10 Ծնվեց հայ դերասան Գուրգեն Ջանիբեկյանը: (Վախճ. 1956թ.-ին):

1904 հունվար 27 Սկսվեց ռուս-ճապոնական պատերազմը:

փետրվար 29 Սկսվեց Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը: (Տևեց մինչև մայիսի կեսերը):

հունիս 9 Ծնվեց հայ նշանավոր դերասան Դավիթ Մալյանը: (Վախճ. 1976-ին)

հուլիս 14 Ծնվեց նշանավոր նկարիչ Ռստամիկ Արոյանը (Արչիլ Գորկի): (Վախճ. 1948թ.-ին):

դեկտեմբեր 22 Ժնևում լույս տեսավ «Վպերյոդ» թերթի առաջին համարը Վ. Ի. Լենինի խմբագրությամբ:

1905 հունվար 9 «Արյունոտ կիրակի»-ի դեպքերը Պետերբուրգում: Ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության սկիզբը:

փետրվար 6 Յարական իշխանու-

թյունների կազմակերպած հայ-ադրբեջանական ընդհարումները Բաքվում, Երևանում, Գանգակուն և Շուշիում:

փետրվար 28 Ցարի բարձրագույն անվանական հրովարտակը Կովկասում փոխարքայությունը վերականգնելու մասին: Կովկասի փոխարքա նշանակվեց Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը (1905-1915 թթ.):

մայիս 1 Ժողովրդական հուզումներ Բիթլիսում: **մայիս 3** Ծնվեց հայ ռեժիսոր Վարդան Աճեմյանը: (Վախճ. 1977թ.-ին):

մայիս 28 Պետերբուրգում վախճանվեց հայագետ Կարապետ Եզյանը (Էզով): (Ծնվ. 1835թ.-ին):

հուլիս 21 Մահափորձ Աբդուլ Համիդի դեմ: **հուլիս 26** Ժողովրդական հուզումներ Բիթլիսում:

օգոստոս 1 Նիկոլայ II-ը չեղյալ հայտարարեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքը: Վերաբացվեցին հայկական եկեղեցական ծխական դպրոցները:

օգոստոս 5 Ծնվեց հայ ավիոկոնստրուկտոր Արտեմ Միկոյանը: (Վախճ. 1970թ.-ին):

օգոստոս 8 Ծնվեց մեծանուն գրող Վախտանգ Անանյանը: (Վախճ. 1980թ.-ին):

սեպտեմբեր 2 Ծնվեց հայ թատրոնի նշանավոր գործիչ, ռեժիսոր Վարդան Աճեմյանը: (Վախճ. 1977թ.-ին):

1905 հոկտեմբեր 10 Ծնվեց հայ դիրիժոր Ալեքսանդր Մելիքֆաշայանը: (Վախճ. 1964թ.-ին):

հոկտեմբեր 17 Նիկոլայ II-ը հրապարակեց մանիֆեստ՝ խոստանալով օրենսդրական դուռնա և դեմոկրատական ազատություններ:

1906 հունվար 3 Թիֆլիսում ստեղծվեց «Սահմանադրական-դեմոկրատական կուսակցության հայ արմատական ֆրակցիան» (հայ կադետներ):

ապրիլ 1 Թիֆլիսում լույս տեսավ բուլշևիկյան «Կայծ» թերթը Ստ. Շահումյանի և Ա. Սպանդարյանի խմբագրությամբ: (Օգոստոսին թերթի հրատարակչությունն արգելվեց):

հունիս 10 Թիֆլիսում ստեղծվեց «Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների միությունը»: Պաշտոնական ճանաչում ստացավ 1907 թ. հուլիսին:

հուլիս 11 Վախճանվեց գերմանացի հայագետ Հենրիխ Հելգերը: (Ծնվ. 1847թ.-ին):

օգոստոս 17 Էջմիածնում բացվեց «Հայոց կենտրոնական ազգային ժողովը» (համագումար): Ցարական կառավարության հրամանով փակվեց 13 օր հետո:

օգոստոս 30 Ցարական կառավարության հրամանով փակվեց Էջմիածնում 13 օր առաջ բացված «Հայոց կենտրոնական ազգային ժողովը»:

նոյեմբեր 9 Ցարական կառավարությունը օրենք հրատարակեց և իրավունք տվեց եվրոպական Ռուսաստանի պետական գյուղացիների դառնալու իրենց հողաբաժինների սեփականատերը:

(Շարունակելի)

Լուրեր

Իրանահայ համայնք

Իրանական 1384 թվականի բյուջեում մեկ միլիարդ 750 միլիոն թուման հատկացվել է կրոնական փոքրամասնություններին



բյուջեում մեկ միլիարդ 750 միլիոն թուման հատկացվել է կրոնական փոքրամասնություններին: Նշելի է, որ Իսլ. խորհրդարանն իր անցյալ տարվա բյուջեում մեկ միլիարդ թուման էր հատկացրել կրոնական փոքրամասնություններին: Այդ գումարը հավելվում կրեց խորհրդարանի կրոնական փոքրամասնությունների պատգամավորների ջանքերի շնորհիվ:

Շայաստան

ԱՅՍ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Ե ԲԱԽՏՈՐՈՇ ԼԻՆԵԼ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ՏԱՌԱՊՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

360 հազար դոլարի դրամաշնորհի հայ գիտնականին

ՎԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

Երեւանյան (պարբերական) հիվանդությունը ավանդաբար համարվում է աշխարհագրական առումով մերձավոր ժողովուրդների՝ հրեաների, հույների, արաբների ու հայերի հիվանդությունը: Հիվանդությունը «տարածքային» դրդապատճառներով բացատրելու այլ հիմքեր էլ կան: Արձանագրվել են բազում դեպքեր, որ բնակավայրը փոխած հիվանդը կարողացել է ձերբազատվել այդ հիվանդությունից: Թուրքերն այս հիվանդությանը բավական խանդով են վերաբերվում: Հայ գիտնականների շրջանում ասելիք է դարձել 1997 թվականին Երուսաղեմում պարբերական հիվանդությանը նվիրված միջազգային գիտաժողովի ժամանակ կատարվածը: Թուրք գիտնականները ելույթներ են ունեցել՝ փորձելով ապացուցել, որ պարբերական հիվանդությունը միայն հայերի կամ հույների մենաշնորհը չէ, որ թուրքերն էլ են հիվանդանում այս հիվանդությամբ: Կա այն տեսակետը, թե այս ախտը հնագույն զենի, հին ազգերի հիվանդությունն է, եւ գուցե այս հանգամանքն է դրդում թուրքերին իրենց եւս վերագրելու այս հիվանդությունը:

Ինչ էլ լինի, հիվանդության հստակ պատճառներն ու բուժումը հայտնի չեն: ՀՀ ԳԱԱ մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ղարաբոյաչյանը, այնուամենայնիվ, պատմում է, որ երկրաշարժից հետո ծանր ստրեստ ապրած

հիվանդներից շատերն առողջացել են: Սակայն ստրեսն ընդհանրական «դեղատոմս» չէ:

Հնարավոր է, որ հայ գիտնականների գյուտը բախտորոշ դառնա այս հիվանդությամբ տառապողների համար: Ժամանա Կծոյանի ղեկավարած գիտնականների խումբը հայտնաբերել է հատուկ մանրէների նյութափոխանակության միջոցով առաջացած այն նյութը, որ հայտնվում է միայն այդ հիվանդության ժամանակ: Հենց այդ նյութի կուտակումներն են նուպայի հանգեցնում: Միայն այս հիվանդության դեպքում այդ նյութի հայտնվելու փաստը հաստատվել է Մոսկվայում իրականացված հետազոտություններով:

Աշխատանքները շարունակելու եւ զարգացնելու ժամանա Կծոյանի ներկայացրած ծրագիրը 360 հազար դոլարանոց ամերիկյան դրամաշնորհ է շահել: Հիվանդության բուժամիջոցը գտնելու հույսն իրական է այնքանով, որ յուրաքանչյուր մանրէ բնության մեջ իր հակամանրէն ունի, որի միջոցով կարելի է ներգործել նրա վրա:

Հայ գիտնականների հետ նաեւ ամերիկացիներ, ռուսներ ու անգլիացիներ են աշխատում: Երեւանյան կամ պարբերական հիվանդությունը մինչ օրս համարվել է գենետիկ հիվանդություն, որ ժառանգաբար կարող է փոխանցվել հաջորդ սերնդին:

Այս ախտը սովորաբար արտահայտվում է որովայնի, կրծքավանդակի շրջանում ուժեղ ցավերով, որոնք հետո լորձաթաղանթի բորբոքային երևույթներ են առաջացնում: Հիվանդի համալիր հետազոտությունը, նույնիսկ վիրահատությունները որպես կանոն որեւէ շեղում չեն հայտնաբերում նրա օրգանիզմում:

Հայաստանում հիվանդների տարեկան միջին թվի 15 տոկոսը պարբերական հիվանդությամբ է տառապում:

ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանն ընդունել է Հայ ավետարանչական ընկերակցության պատվիրակությանը՝ ընկերակցության նախագահ դոկտոր Հրայր Ահարոնյան գլխավորությամբ

ԵՐԵՎԱՆ, 20 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանն այսօր ընդունել է Հայ ավետարանչական ընկերակցության պատվիրակությանը՝ ընկերակցության նախագահ դոկտոր Հրայր Ահարոնյան գլխավորությամբ: Ինչպես տեղեկացանք ՀՀ Նախագահի մամուլ գրասենյակից, հանրապետության նախագահը զոհուհանությունը նշել է, որ հայ ավետարանականների հետ հանդիպումները պարբերական բնույթ են կրում: Նա բարձր է գնահատել Ավետարանական եկեղեցու կողմից իրականացվող կրթական, բարեսիրական ծրագրերը եւ ասել է, որ մշտապես նկատելի է սկսած գործում հետեւողականությունը:

Հարգանքի տուրք Պարույր Սեւակի հիշատակին

ՋԱՆԳԱԿԱՏՈՒՆ, 17 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 1971 թվականի ամառային մի տաք օր՝ հունիսի 17-ին, Պարույր Սեւակը (1924-1971 թ.թ.) կնոջ եւ որդիների հետ իր ավտոմեքենայով դուրս եկավ հայրենի Չանախչի գյուղից, ուղղություն վերցրեց դեպի Երեւան եւ Երասխավան գյուղի մոտերքում, հարթ խճուղու վրա ավտովթարի ենթարկվեց: Մահացան ինքն ու կինը: Սեւակի մահվան տարելիցներն այնուհետեւ վերածվեցին ոչ թե սզո արարողությունների, այլ՝ պոեզիայի տոնի: Դրանք հանդիսավորապես նշվեցին

գրական հասարակայնության կողմից, ամեն տարի յուրատեսակ ուխտագնացության օր դարձան. ամեն տարի գրողները, գրականագետները, ընթերցողները մեծ ու փոքր, Երեւանից ու հանրապետության այլ քաղաքներից մեկնում են Չանախչի-Սովետաշեն-Ջանգակատուն, իրենց հարգանքի տուրքը մատուցում խորհրդահայ գրականության դասականի հիշատակին:

Հունիսի 17-ին՝ Սեւակի մահվան 34-րդ տարեդարձի օրը, դարձյալ հոծ բազմություն էր հավաքվել նրա հայրական տան բակում ու տանը կից թանգարանում: Այստեղ էր նաեւ Հայաստանի գրողների խումբը՝ Գրաիրատարակչական գործի գործակալության պետ, Հայաստանի գրողների միության քարտուղար Էդվարդ Միլիտոնյանի գլխավորությամբ: Գրողի գերեզմանի մոտ կայացած հավաքում նրա մասին խոսք ասացին գրականության հայտնի գործիչներ, հասարակայնության ներկայացուցիչներ: «Պարույր Սեւակը մեր անցյալի, ներկայի եւ գալիքի եղիցի լույսն է», ասաց պրոֆ. Միլիտոնյանը: «Կեղծ եւ անբարո ժամանակների մեջ Սեւակը տեսավ մեծ ճշմարտությունը, մարդուն մարդ պահող արդարությունն ու արժանապատվությունը», -այսպես արտահայտվեց Սեւակի բարեկամ, բանաստեղծ Համլետ Կարճիկյանը: Դերասան Ազատ Գասպարյանը հնչեցրեց Պարույր Սեւակի, ուրիշ հայ գրողների պոեզիան:

Նախատեսվում է, որ 2006 թվականին ԱՄՆ-ը Հայաստանին ցույց կտա 67,5, Լեռնային Ղարաբաղին՝ 5 միլիոն դոլարի օգնություն

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 17 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ Ներկայացուցիչների տան հատկացումների ենթահանձնաժողովը կայացրել է Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին 2006 թվականին հատկացվելիք օգնության գումարների մասին որոշում: 2006 թվականին Հայաստանը որպես օգնություն ԱՄՆ-ից, ըստ այդ որոշման, ստանալու է 67,5, Լեռնային Ղարաբաղը՝ 5 միլիոն դոլար: Հայաստանին եւ Ղարաբաղին հատկացվելիք գումարների չափը նախկին ֆինանսական տարվա համեմատությամբ մնում է նույնը, չնայած նախկին խորհրդային հանրապետությունների համար նախատեսված բյուջեի կրճատումներին: Եթե 2005 թվականին նախկին խորհրդային հանրապետություններին հատկացվել է 550 միլիոն դոլարի օգնություն, ապա 2006-ի համար նախատեսված է 470 միլիոն:

Բացի այդ, 2006 թվականին կշարունակվի ռազմական բնագավառում Հայաստանին եւ Ադրբեջանին հատկացվելիք օգնության հավասարակշռությունը: Երկու հանրապետություններից յուրաքանչյուրին 2006 թվականին այդ ուղղտուն կհատկացվի 5 միլիոն 750-հազարական դոլար: Ենթահանձնաժողովի կայացրած որոշումը դեռեւս վերջնական չէ. այն, ըստ Ամերիկայի Հայկական Համագումարի, պիտի հաստատվի Ներկայացուցիչների տան լիազումար միստի կողմից, ապա Սենատում կայացվելիք որոշումից հետո հարցը ներկայացվելու է Սենատի եւ Ներկայացուցիչների տան համատեղ քննարկմանը: Ամերիկայի Հայկական Համագումարը հատկացումների վերաբերյալ կայացրած որոշման համար շնորհակալության խոսք է հղել Կոնգրեսի հայկական հարցերով համանախագահ Ջո Նոլենբերգին, վերոհիշյալ ենթահանձնաժողովին ու նրա նախագահին:

Մեծամորի ատոմակայանի տարածքում կկառուցվեն միջուկային վառելիքի նոր չոր գերեզմանոցներ

ԵՐԵՎԱՆ, 16 ՀՈՒՆԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մեծամորի ատոմակայանի տարածքում միջուկային վառելիքի նոր չոր գերեզմանոցներ կառուցելու ուղղությամբ ներկայումս քննարկումներ են ընթանում: ՀԱԷԿ-ի գործադիր տնօրեն Աշոտ Մարկոսյանի խոսքերով, ծրագիրը կիրականացվի 3 փուլով, յուրաքանչյուր փուլով նախատեսվում է գերեզմանոցում տեղավորել 670 ձողիկ: Ծրագրի առաջին փուլը նախատեսվում է ավարտել 2007թ-ին: Դեռեւս պարզ չէ, թե յուրաքանչյուր փուլի իրականացման համար որքան գումար կպահանջվի, սակայն այս տարվա պետբյուջեով այդ նպատակով արդեն հատկացվել է 1,5 մլն դրամ: Աշոտ Մարկոսյանի խոսքերով, քանի որ հին գերեզմանոցները նախագծած ֆինանսական ընկերությունը տիրապետում է համապատասխան սարքավորումներին, հայկական կողմը բանակցում է վերջինիս հետ նորերի կառուցման գործընթացը ստանձնելու նպատակով:

Հայկական քարը հետաքրքրում է արտասահմանցի ներդրողներին

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Քարանշակման «Պետրոպոլ» ընկերության արտադրանքի հանդեպ հետաքրքրություն են ցուցաբերել Սաուդյան Արաբիայի ընկերությունները: Այդ մասին, ըստ «Արմենպրեսի», ասաց ընկերության տնօրեն, Հայաստանի քարարտադրողների միության անդամ Պերճ Եղիազարյանը: Ըստ նրա՝ ձեռնարկության առաջարկներով հետաքրքրվել են նաեւ այլ երկրների ընկերություններ:

«Արարատի տրավերտինի հանքի շահագործումը եւ քարի մշակումը լավ կազմակերպելու առումով դրական արդյունք կարող է տալ մոտ 2,3 մլն դոլարի ներդրումը», - նշեց Պ.Եղիազարյանը. «Պետրոպոլը» մշակում է հանքավայրի մոտ 3 մլն խմ պաշարների 1 տոկոսը:

Նրա տվյալներով՝ Հայաստանում տրվել է տարեկան 1 մլն խմ բազալտ ստանալու լիցենզիա, սակայն իրականում ստացվում է 200 հազար խմ: Նման իրավիճակ է առկա նաեւ տրավերտինի հանքավայրերի շահագործման ուղղտուն, ինչը վկայում է այն մասին, որ քարի մշակման ռեսուրսներն ամբողջությամբ չեն օգտագործվում:

Պատճառներից մեկը երկարաժամկետ եւ ցածր տոկոսադրույքներով վարկեր ստանալու հնարավորության բացակայությունն է: Մասնավորապես՝ Արարատի տրավերտինի պարագայում գնի տրանսպորտային բաղադրիչի մեծ լինելը հատուցվում է այն բանով, որ հանքավայրի վերին շերտը գտնվում է երկրի մակերեսույթի մոտ, ինչն ընծեռում է ոչ թե հանքախորշ փորելու, այլ հանքը մակաբացվածքով շահագործելու հնարավորություն:

Դրա շնորհիվ հայկական տրավերտինը Փոթի եւ Բաթուն նավահանգիստներում առաջարկվում է այլ առաջարկներից 20 տոկոս էժան, իսկ Եվրոպական նավահանգիստներում՝ 40 տոկոս էժան գներով: Քայլեր են ձեռնարկվում տեղական արտադրության հաստոցների կիրառմամբ հայկական շինաքարի որակը բարձրացնելու ուղղությամբ: Ներկայումս քարի մշակման

հաստոցներ եւ սարքավորումներ են արտադրում հայկական 4 ձեռնարկություններ:

Ամենայն Հայոց կաթողիկոսը հանդիպել է Կալիֆորնիայի նահանգապետի հետ

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Հունիսի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը հանդիպում ունեցավ Կալիֆորնիայի նահանգապետ Առնոլդ Շվարցենբերգի հետ, տեղեկացնում են Մայր Աթոռի մամլո դիվանից:

Նույն օրը Սակրամենտոյում Նորին սրբությունը հանդիպումներ ունեցավ նաեւ քաղաքային իշխանությունների, նահանգի օրենսդիրների եւ սենատորների, այդ թվում՝ սենատոր Չաք Փուչիկյանի հետ:

Վեհափառ հայրապետին ուղեկցում էին ԱՄՆ Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանը, Տ. Վաչե արք. Հովսեփյանը եւ թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Տաճատ ծ. վրդ. Յարդյանը:

Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիսապետությանը Ֆրեզնոյում հոգեհանգստյան պաշտոն է կատարվել Սողոմոն Թեհլերյանի շիրիմի մոտ

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Շարունակվում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հովվապետական այցը ԱՄՆ Արեւմտյան թեմ: Հունիսի 13-ին Ամենայն Հայոց կաթողիկոսը շքախմբի հետ միասին այցելել է Ֆրեզնոյի «Ռոթարի ակումբ» միջազգային բարեգործական կազմակերպություն:

Նորին Սրբության այցը համընկել է ակումբի հաստատման 100-մյակի հետ: Ամենայն Հայոց Հայրապետը խոսել է հայ ժողովրդի եւ եկեղեցու պատմական ուղու մասին՝ անդրադառնալով պատմության նշանակալի հանգրվաններին:

«Մենք հավատում ենք, որ խաչելությանը հարություն է հաջորդում», -ասել է Նորին Սրբությունը՝ վստահեցնելով, որ հակառակ 1915թ. Հայոց Ցեղասպանության եւ խորհրդային կարգերի հայ ժողովուրդը համախումբ պիտի պայծառացնի իր Հայրենիքը:

Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքն է հայտնել Ակումբի անդամներին աստվածահաճ ձեռնարկների համար: Նույն օրը Ֆրեզնոյում Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիսապետությանը հոգեհանգստյան պաշտոն է կատարվել Սողոմոն Թեհլերյանի շիրիմի մոտ:

Հավարտ հոգեհանգստյան Նորին Սրբությունը քարոզել է արդարության եւ հայերի աննկուն ոգու մասին՝ իր օրհնությունները բաշխելով համախմբված բարեպաշտ հայորդիների: Ֆրեզնոյի Սբ Պողոս եկեղեցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը հանդիպել է ԱՄՆ Արեւմտյան թեմի՝ Կենտրոնական Կալիֆորնիայի ծխական խորհուրդների անդամների եւ հովիվների հետ:

Կարեւորելով նման հանդիպումները՝ Հայոց Հայրապետը խորհրդանշական է համարել իր այցը ԱՄՆ Արեւմտյան թեմ այն տարում, երբ համայն հայ ժողովուրդը նշում է Հայոց գրերի գյուտի 1600-ամյակը եւ հիշատակում Հայոց Ցեղասպանության 90-ամյակը:

«Մենք փրկվել ենք եւ կշարունակենք ապրել, եթե պահպանենք մեր քրիստոնեական եւ ազգային ինքնությունն ու արժեքները», -ասել է Նորին Սրբությունն իր խոսքում: «Աստված մեզ հետ է, եւ մենք քաջաբար պետք է քայլենք դարերի միջով», - ընդգծել է կաթողիկոսը՝ նշելով, որ մեծ ձեռքբերումների հասնելու համար նախ հարկ է պահպանել մեր ժառանգությունը:

Ֆրեզնոյի քաղաքապետարանում Ամենայն Հայոց կաթողիկոսը հանդիպում է ունեցել քաղաքապետ Ռոջեր Մոնտերոյի հետ: Քաղաքապետ Մոնտերոն, ողջունելով Նորին Սրբության այցը, ներկայացրել է քաղաքապետարանի պաշտոնյաներին եւ Քաղաքային խորհրդի անդամներին:

Նորին Սրբությունն իր հերթին ուրախություն է հայտնել ջերմ ընդունելության ու ցուցաբերած հարգանքի համար: Նա նշել է, որ հայերը Ֆրեզնոյում հաստատվել են 1898թ. համիդյան ջարդերից եւ 1915թ. Հայոց Ցեղասպանությունից հետո: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրել է, որ այսօր հայորդիների դերը այդ տարածաշրջանում նկատելի է ինչպես գյուղատնտեսության, այնպես եւ բազում այլ ոլորտներում:

Ամենայն Հայոց կաթողիկոսը նաեւ իր գնահատանքն է հայտնել Կալիֆորնիայի նահանգի իշխանություններին եւ վստահություն, որ մեկ օր Միացյալ Նահանգները կընդունի եւ կդատապարտի Հայոց Եղեռնը:

Թուրքահայ լրագրողն այլընտրանք է առաջարկում Թուրքիային

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Թուրքահայ լրագրող Մարգար Եսայանը թուրքական «Ռադիկալում» գրել է, որ իր հայկական քաղաքականության մեջ Թուրքիան պետք է փոփոխությունների գնա:

Նշելով, որ «1915 թ-ի իրավական ճանաչումից առաջ Թուրքիան անելու շատ բան ունի», թուրքահայ լրագրողը գրել է, որ Թուրքիայի կողմից անընդհատ կրկնվող այն թեզը, թե «պատմությունը պետք է թողնել պատմաբաններին», ոչ այլ ինչ է, քան խուսափում՝ Հայաստանի հետ առկա խնդիրները լուծելու անհրաժեշտությունից:

«Նման մոտեցումով Թուրքիան ցանկանում է ոչ թե լուծել խնդիրը, այլ երկարաժամկետ սառեցնել այն, քանի որ ոչ թուրք, եւ ոչ էլ հայ պատմաբանները դեռեւս ի վիճակի չեն փոփոխություններ կատարել իրենց համոզմունքներում: Այսինքն, հարցը պատմաբաններին թողնելով, քաղաքականությունը կսառեցվի, իսկ դրա լուծումը կիտաձգվի «խճճված, անփույթ եւ անծայր» մի գործընթացի», - ասել է նա:

Թուրքահայ լրագրողը գրել է, որ Երդողանի միակողմանի

այդ առաջարկը չի կարող ընդունվել հայերի կողմից, քանի որ ի տարբերություն թուրքերի, որ 90 տարի շարունակ «մեղմ ասած մոռացության» են մատնել 1915 թ-ի իրադարձությունները, Հայոց ցեղասպանության մասին պնդումները հայերը սկսել են 1915 թ-ից մի քանի տարի հետո եւ ոչ միայն իրենց ապացուցել դրա իրողությունը:

«90 տարի շարունակ այդ հարցի հետ արթնացող հայերի համար Թուրքիայի վարչապետ Թայիփ Էրդողանի առաջարկած այդ բանաձեւը ոչ միայն անընդունելի, այլեւ անհասկանալի է, քանի որ Հայոց ցեղասպանության իրողությունը սխիւմբի եւ Հայաստանի համար վաղուց ավարտված, իսկ աշխարհի կողմից էլ շարունակաբար ընդունվող գործընթաց է»:

Թուրքահայ լրագրող Եսայանը գրել է, որ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ժամանակ Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման համար ստեղծված հնարավորությունից չօգտված Թուրքիայի համար մի նոր առիթ է ստեղծվել արդեն ներկայիս նախագահ Ռեբերտ Քոչարյանի կողմից արված «առանց նախապայմանների հարաբերությունները նորմալացնելու» վերաբերյալ առաջարկությամբ:

«Եթե Թուրքիան ցանկանում է ակտիվ քաղաքականություն վարել, ապա պետք է հրաժարվի հայկական հարցում կառավարող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության առաջ քաշած հակադրվող եւ հայերի համար անմարտելի քաղաքականությունից», - ասել է Եսայանը:

Ըստ նրա, Էրդողանը պետք է ասի Քոչարյանին, որ «ցեղասպանությունը ներկա պահին ոչ իր կողմից է հնարավոր ընդունել, եւ ոչ մերժվել՝ հայերի կողմից, որ դա ավարտ չունեցող թեմա է, եւ որ ցեղասպանությունը չընդունելու հետ միասին, ինչպիսին էլ լինի նրա իրավական ճանաչումը, կիսում են 90 տարի առաջ հայ ժողովրդի կրած ցավը», եւ հավելի, որ «բոլոր դժվարությունների հետ միասին, եկեք դիվանագիտական հարաբերություններ հիմնենք, ժողովուրդներն առեւտուր սկսեն, թուրքերը Հայաստան, հայերն էլ՝ Թուրքիա այցելեն, համալսարանները, հասարակական-քաղաքացիական կազմակերպությունները համագործակցեն, իսկ փոխադարձաբար վնասված զգացումները վերանորոգվեն համաձայնության եւ հարաբերությունների ստեղծման մշակույթով»: Եսայանը թուրքական «Ռադիկալում» գրել է, որ Թուրքիան պետք է Ղարաբաղի հարցում անկողմնակալ լինի եւ հաշտության կառուցման համար առավելագույն ջանքեր ցուցաբերի:

«Ինչպես տեսնում եք, 1915 թ-ի իրավական ճանաչում-չճանաչումից առաջ Թուրքիան շատ անելիքներ ունի, ինչը ոչ միայն պատմաբանների, այլեւ ամբողջ թուրք ժողովրդի պատասխանատվությունն է», - ասել է Թուրքահայ լրագրող Մարգար Եսայանը:



ԱՂԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԱՎԱՏՐԱԼԻԱՅԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանյան եկեղեցու Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմերի առաջնորդ Աղան արք. Բալիոգյանը Նոր Հարավային Ուելսի էկումենիկ խորհրդի վերջերս գումարված տարեկան նիստում ընտրվել է այդ խորհրդի նախագահ, հաղորդում է «Արմինյ միրոր սփեքթեր» շաբաթաթերթի հունիսի 11-ի համարը: Նախագահի պարտականությունների մեջ է մտնում պահպանել կարգ ու կանոնը, միասնությունը եւ խաղաղությունը խորհրդի նիստում եւ ներկայացնել խորհուրդը տարբեր հասարակական միջոցառումներում: Բալիոգյանը 1994-97 թթ. եղել է նաեւ Ավստրալիայի եկեղեցիների ազգային խորհրդի առաջին նախագահը:

Մշակութային

Բաղդադի ազգային վարժարանը

Պարույր ՀԱԿՈՒՅԱՆ

Բաղդադի առաջին ազգային վարժարանը՝ Ս. Թարգմանչաց դպրոցը, բացվել է 1852 թ., որի առաջին տնօրենը Մանվել Դիլանյանն էր: Նա բաղդադահայությանը հայտնի էր «Մանվել վարժապետ» անունով:

1870-ական թվականներին հայկական միջավայրը զարգացած էր ու եվրոպական լեզուներ իմանալը անհրաժեշտություն էր դարձել:

Ժամանակի ազգային իշխանությունը դիմեց Պոլիսին, եւ Ներսես պատրիարք Վարժապետյանը Բաղդադ ուղարկեց Սիիրան Սվաճյանին՝ որպես Թարգմանչաց վարժարանի ուսուցիչ եւ տնօրեն: Ս. Սվաճյանը մտավոր մեծ կարողությունների տեր էր, գրաբարի, աշխարհաբարի, ֆրանսերենի, թուրքերենի, աշխարհագրության հմուտ մասնագետ: Սվաճյանի օրոք վարժարանը մեծ առաջընթաց ունեցավ եւ առաջին տեղը գրավեց Բաղդադի վարժարանների շարքում:

1901 թ. հիմնադրվեց Չաբեյյան օրիորդաց վարժարանը, որի տնօրենը դարձյալ Սիիրան Սվաճյանն էր:

1917 թ., երբ բրիտանացիները գրավեցին Բաղդադը, Ս. Թարգմանչաց եւ Չաբեյյան վարժարանները միավորվեցին, կրթօջախը դարձավ երկսեռ եւ կոչվեց Թարգմանչաց երկսեռ վարժարան: Իսկ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայրենիքից տեղահանվածներից Իրաք հասած վասպուրականցի ու պարսկաստանցի հայերի մի մասը 1921 թ. համեստ մի վարժարան հիմնեց:

Ազգային իշխանության հավանությամբ դպրոցը 1936 թվին 10 տարով հանձնվեց ԻՅԸԸ միությանը. այն կոչվեց Սվաճյան վարժարան: 1946-ին, երբ լրացավ պայմանագրի ժամկետը, վարժարանը կրկին

հանձնվեց ազգային իշխանությանը: Նույն թվականին էլ Ս. Թարգմանչաց դպրոցն ունեցավ առաջին միջնակարգ դասարանը՝ 6 աշակերտով:

1949-ին Սվաճյան եւ Թարգմանչաց վարժարանները միավորվեցին եւ 4 դասարանների հիման վրա ստեղծեցին Նորերը, իսկ դպրոցը կոչվեց Ս. Թարգմանչաց եւ Սվաճյան վարժարան: Ժամանակի ընթացքում աշակերտության թիվն ավելացավ, եւ 1962 թ. հին շենքին կից «Գալուստ Գյուլբենկյան» հաստատության ծախսերով կառուցվեց եռահարկ մի շենք՝ միջնակարգ ու երկրորդական բաժինների համար:

Ազգային վարժարանը, մանկապարտեզից հասնելով երկրորդական դպրոցի աստիճանի, դարձավ Բաղդադի ամենաառաջնակարգ վարժարաններից մեկը՝ 1200 սանով:

1975 թվականին հայապահպանության մեր այդ ամրոցը օրենքով փոխանցվեց պետությանը:

Մեկը մյուսին հաջորդեցին դժվարությունները: Նախ՝ փոխվեցին տնօրինությունը եւ վարչակազմը, այնուհետեւ ծրագրից հանվեցին հայոց լեզվի ու կրոնի դասերը, սակայն Ազգային կենտրոնական վարչության լուրջ ու հետեւողական աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ այդ առարկաները դասավանդել շաբաթական երկու ժամ: 1974 թ. վարժարանն ուներ 1200 աշակերտ, այժմ այդ թիվը նվազել ու հասել է 750-ի, որից միայն 250-ն են հայ:

Ծրագրված ձեռով ամեն տարի Նորանոր դժվարություններ են ստեղծվում: Հայոց լեզվի ու կրոնի ուսուցիչները մշտական աշխատողներ չեն եւ ստանում են չնչին աշխատավարձ:

Դպրոցի միջնակարգ ու երկրորդական բաժինները վերացվեցին, իսկ աշակերտությունը բաժանվեց ուրիշ վարժարանների միջեւ: Աղջիկները կարող են տեղավորվել «Շարքիա» օրիորդաց վարժարանում եւ իրավունք ունեն շաբաթը երկու անգամ ուսանել հայոց լեզու եւ կրոն:

Ամեն տարի դպրոցի վերանորոգման խնդիրները նույնպես հոգում է տեղի հայությունը, որպեսզի հայ երեխաները կարողանան հաճախել նախկին վարժարանը: Ազգային առաջնորդարանը կազմակերպում եւ հոգում է կրթական տրանսպորտային ծախսերի մեծ մասը:

Ներկայումս, երբ փոփոխության ենթարկվեց երկրի վարչակարգը, պետք է վերակառուցենք մեր դպրոցները, որտեղ պիտի հայեցի դաստիարակություն ստանա մեր Նոր սերունդը, եւ այս ուղղությամբ մեծ աշխատանքներ է տանում ազգային իշխանությունը: Անշուշտ, մոտ ապագայում դա կդառնա իրականություն, սակայն այդ գործում մեծ գումարների կարիք ենք ունենալու:



ԻՆՉՊԻՍԻՆ ԿԼԻՆԻ ԵՐԵՎԱՆԸ 2020 Թ.-ԻՆ

Ներկայացրեց «Երեւաննախագծի» գլխավոր տնօրենը

Մինչեւ 2006 թ. հունվարի 1-ը Երեւանը պետք է ունենա գլխավոր հատակագիծ, որը կդառնա հիմնական քաղաքաշինական պետական փաստաթուղթը: Կառավարության այդ որոշման մասին երեկ հայտնեց կառավարության քաղաքաշինության վարչության պետ Սիրեկան Օհանյանը: Իսկ մինչ այդ գործադիր մարմինը հաստատեց գլխավոր հատակագծի հայեցակարգը, որը ներկայացրեց «Երեւաննախագիծ» ինստիտուտ» ընկերության գլխավոր տնօրեն Գուրգեն Մուշեղյանը:

Նախագծային կազմակերպության ղեկավարը, նշելով, որ այս հայեցակարգը քաղաքի զարգացման հիմնական միտումներն ու ուղղությունները նախանշող փաստաթուղթն է, ասաց, որ դրա ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր երկու հիմնական գործոններով: Առաջինն այն է, որ Երեւանը միութենական հանրապետության մայրաքաղաքից դարձել է անկախ պետության մայրաքաղաք, իսկ երկրորդը՝ մեր երկիրը պլանային տնտեսությունից անցում է կատարել շուկայական տնտեսության:

Գլխավոր հատակագծի հայեցակարգը նախատեսում է, որ 2020 թ. մայրաքաղաքը պետք է ունենա 1,2 մլն բնակչություն, իսկ տարածքն ու համայնքները կմասն նույնը, ինչպես սահմանվել են 1996 թ. ընդունված «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքով: Այսինքն, Երեւանի զարգացման համար հավելյալ տարածքներ չեն տրամադրվելու: Չարգացումը պետք է տեղի ունենա ներկայումս չօգտագործվող տարածքների եւ վթարային շինությունների քանդման հաշվին: Սպորտային համալիրների կառուցում է նախատեսված քաղաքամերձ տարածքներում: Բնակելի տարածքները կառուցելիս հիմք պետք է ընդունվի 1 անձին 20 քմ կամ նվազագույնը 18 քմ բնակտարածքը: Բնակչության խտությունը 1 հա-ի վրա պետք է լինի 180 մարդ:

Արդյունաբերական ձեռնարկությունների համար Նոր տարածքների տրամադրում նախատեսված չէ: Գուրգեն Մուշեղյանը դա բացատրեց այն հանգամանքով, որ արդյունաբերական տարածքներն առանց այդ էլ մեծ են եւ մասամբ են օգտագործվում: Այստեղ կան ազատ տարածքներ, որոնց վրա էլ կարելի է Նոր արտադրություններ զարգացնել: Միաժամանակ նշվեց, որ նպատակահարմար չէ արդյունաբերական զարգացումը կենտրոնացնել միայն Երեւանում եւ պետք է խրախուսել մարզերում գործարարության զարգացմանը:

Տրանսպորտային հիմքը մայրաքաղաքում կդառնա Նոր մայրուղային ցանցը, որով նախատեսվում է կառուցել քաղաքը շրջանցող երկու ճանապարհներ: Մետրոպոլիտենի տեխնիկատնտեսական հիմնավորումը կպահպանվի:

Երեւանի տարածքում առկա հանքավայրերը սպառվելուց հետո կվերածվեն կանաչ տարածքների, իսկ ծանր մետաղներով հագեցած գյուղատնտեսական հողերը կդրվեն կառուցապատման տակ: Գուրգեն Մուշեղյանը տեղեկացրեց, որ կանաչ տարածքները բաժանվելու են երեք մասի: Առաջինն՝ ընդհանուր օգտագործման, որ ներկայումս ծառազուրկ են եւ պետք է վերափոխվեն կանաչ տարածքների, երկրորդը սահմանափակ օգտագործման, որոնք առանձնատների կից կանաչ տարածքներն են եւ

երրորդ՝ հատուկ տարածքներ, այսինքն անտառներ: Ըստ նրա, 2020 թ. նախատեսված է 1 շնչին ընկնող կանաչ տարածքները հասցնել մինչև 49 քմ-ի: Ջրամատակարարման ցանցը կգոտեւորվի: Բնակչի համար նախատեսված է օրական 150 լիտր ջուր: Կոյուղու խողովակները, մաքրման կայանը պետք է վերակառուցվեն: Ջրամատակարարման համակարգը պետք է հիմնված լինի տեղային (լոկալ) ջեռուցման վրա: Երեկվա ճեպագրույցին ներկա էր նաև Երեւանի գլխավոր ճարտարապետ Սամվել Դանիելյանը, որին ուղղված հարցն առնչվում էր մայրաքաղաքի Կենտրոն համայնքում իրացման գոտիներ հայտարարված մի շարք տարածքների ճակատագրին: Գլխավոր ճարտարապետը պատասխանեց, որ այդպիսի տարածքներ են Կոնդը, Կոզեր թաղամասի մի մասը, Ֆիրդուսու տոնավաճառի տարածքը, Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն, գիևու կոմբինատին հարող տարածքները: Դրանցից բոլորի վերաբերյալ, բացառությամբ Կոզերի, հստակեցված են նախագծային առաջարկները: Այդ տարածքներում կառուցապատում իրականացնելու համար հետաքրքրություն ցուցաբերողներ արդեն կան, բայց առայժմ ոչ մի կազմակերպություն ներդրումային առաջարկ կամ ծրագիր չի ներկայացրել:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԵԿԵՂԵՑՎՈՑ
«ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ»
ՉԱՎԵՇՏԸ**

ԵՐՈՒՆԴ ԱՉԱՏԵՆ

Մեր եկեղեցւոյ իշխանները առիթ չեն փախցնէր պնդելու թէ, «մէկ ու միասնական է Հայաստանեայց եկեղեցին»: Այս հաստատումը ամենէն բարձրաձայն յայտարարողները բուն խախտողներն են այդ միասնականութեան: Հայաստանի անկախացման շրջանի պատուհասներէն մէկն ալ աղանդներու արշաւանքն է դէպի մեր ժողովուրդը՝ խախտելու համար մեր հաւատքի արդէն խարխուլ կառոյցները: Երոպական Միութիւնն ու Արեւմուտքը՝ շատ գիտակ աղանդներու աւերիչ դերին, կը քաջալերեն այդ արշաւանքը՝ «խղճի ազատութեան» լոզունգին տակ, իրականացնելու համար ամենէն անխիղճ հետեւանքը՝ Հայաստանեայց եկեղեցւոյ արմատներուն խախտումը: Ի տես այս արշաւանքին, ոմանք ահաբեկած, կոչ կ'ուղղեն առաջն առնելու աղանդներու պատճառելիք աւերին մեր եկեղեցւոյ ծոցին մէջ: Այդ կոչերը ինքնին իրաւացի են, սակայն, որդերը արդէն մտած են մեր եկեղեցւոյ կառոյցին մէջ եւ Հայոց եկեղեցւոյ միասնականութեան խախտումով՝ պիտի դիւրացնեն աղանդներու պատճառելիք քայքայումը մեր հաւատքի կառոյցներէն ներս:

Եթէ տակաւին թերահաւատութիւններ կային, թէ գուցէ իրապէս միասնականութիւն մը գոյութիւն ունի Հայոց եկեղեցւոյ ծոցին մէջ, այդ թերահաւատութիւններն ալ փարատեցան ի տես այն ողբերգա-զաւեշտական երեւոյթին, որ պարզուեցաւ Սրբազան Պապի յուղարկաւորութեան առիթով: Արդարեւ, Սրբազան Պապին վախճանման առիթով մեր եկեղեցւոյ բոլոր աթոռներէն ու թեմերէն ցաւակցական պատգամներ յղուեցան Վատիկան. այսքանը բնական ու հասկանալի էր. սակայն, ինչ-որ անհասկանալի եւ անբնական էր՝ ամէն իշխանաւորի փութաշանութիւնն էր՝ փէշերը հաւաքելով Վատիկան վազելու, Հայաստանեայց եկեղեցին առանձին ներկայացնելու հիւանդագին ու ցուցամոլ մարմաշով մը: Եթէ մէկ ու միասնական էր Հայաստանեայց եկեղեցին, ան պետք էր ներկայացուած ըլլար մէկ պատուիրակութեամբ, գլխաւորութեամբ Ամենայն Հայոց հայրապետին: Սակայն, այդպէս չէրաւ: Չենք գիտեր, թէ ինչպիսի հաղորդակցութիւն կայացաւ Հայ եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու միջեւ միասնական պատուիրակութեամբ մը ներկայանալու. սակայն, պարզուած տխուր երեւոյթն էրատելով կրնանք եզրակացնել, թէ ոչ մէկ հաղորդակցութիւն կայացած է, կամ եթէ փորձ մը կատարուած է միացեալ ճակատով մը ներկայանալու՝ բացայայտօրէն ձախողած է ան կարգ մը եկեղեցականներու մենամոլութեան պատճառաւ: Հագիւ թէ Մայր Աթոռը հաղորդագրութիւն մը հրատարակած էր, թէ Ամենայն Հայոց Հայրապետը Սրբազան Պապին յուղարկաւորութեան պիտի մասնակցէր Խաժակ Սրբազանի ընկերակցութեամբ, հաղորդագրութիւններ լոյս ընծայուեցան նաեւ Անթիլիասէն ու Պոլսէն, պարզելով զաւեշտական երեւոյթ մը զոր Շահնուր պիտի բնորոշէր իբրեւ «պատկերազարդ պատմութիւն հայոց»: Հետաքրքրական է անդրադառնալ Անթիլիասի եւ Պոլսոյ հաղորդագրութիւններուն, ուրկէ կը պարզուի համապատասխան հոգեւոր իշխանաւորներուն յանձնապատասխանութիւնը՝ հայոց հոգեւոր գերագոյն պետը նստեցնելու բացայայտ ձգտումին առջնութիւնը: Այսպէս, Ապրիլ 7, 2005 թուակիր հաղորդագրութիւնը կը յայտնէ ի լո՛ւր աշխարհին, թէ «Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա կաթողիկոսը անձամբ պիտի մասնակցի Յովհաննէս Պողոս Բ. Պապի յուղարկաւորութեան յանուն աշխարհատարած հայ համայնքներուն, որոնք կը գտնուին Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հովանաւորութեան ներքեւ»: անշուշտ այս «աշխարհատարած»-ին մաս կը կազմեն նաեւ Պարսկաստանի, Յունաստանի, Մ. Նահանգներու եւ Կանադայի յափշտակուած թեմերը: Այս «աշխարհատարած»-ը ինքնին հաստատել կ'ուզէ, թէ Արամ Ա. կաթողիկոս գլուխն է անոր, երբ մանաւանդ չի նշուիր, թէ Հայաստանեայց եկեղեցին ի հոգեւոր գերագոյն մարմին մը ունի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ: Գալով Ապրիլ 6 թուակիր Պոլսոյ պատուիրակութեան հաղորդագրութեան, այդտեղ աւելի մեծ աճպարարութիւն մը բեմադրուած է: Այսպէս,

աւետելէ ետք Մետրոպ Սրբազանի Զոմ մեկնելու լուրը, կ'ըսուի. «Մետրոպ պատրիարք դէպի Զոմ պիտի ճամփորդէ Էբումենական պատրիարք Բարթողիմէոս Ա-ի հետ, վերջնոյն անձնական օղանաւով»:

Ինչպէս ծանօթ է՝ Բարթողիմէոս պատրիարք Յունաց տիեզերական պատրիարքն է, հետեւաբար Արամ կաթողիկոսի «աշխարհատարածը» քիչ մը նեղ թուած է Մետրոպ պատրիարքի յաւակնութեանց ու ան որոշած է «տիեզերական» թելերով հասնիլ Զոմ: Այսքան բարձրաթիւի յաւակնութիւններն ալ կարծես բաւարար չըլլային, հաղորդագրութիւնը կը տեղեկացնէ, թէ Մետրոպ պատրիարք Զոմի մէջ պիտի գիշանի հանդիպիլ Գարեգին Բ. Ամենայն Յայոց Յայրապետին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին, որոնք իրենց շքախումբերով պիտի գտնուին Զոմ (կարծէք վերջինները զբօսապտոյտի գացած ըլլային):

Այս առիթով պէտք է վերանայնել նաեւ ուրիշ երեւոյթ մը, որ Յայաստանեայց եկեղեցին կտրատելու ու նսեմացնելու ցանկութենէն կը բխի. արդարեւ, Անթիլիասի կաթողիկոսարանը, որ ի ժամու եւ ի տարածամու հաղորդագրութիւններ հրատարակելու ցանկութեամբ տարուած է, սկսած է մաքսանենգութեամբ հեղինակութիւն ապահովելու գործին: Արդարեւ, ամէն հաղորդագրութեան ներքեւ պարտաճանաչ կերպով աւելցնելով հետեւեալ ծանօթագրութիւնը. «Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը Յայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ երկու կաթողիկոսութիւններէն մէկն է»: Ոչ ոք կրնայ առարկել, թէ ըսուածը սխալ է. խաբէբայութիւնը, սակայն, չըսուածին մէջն է: Յայաստանեայց եկեղեցին մէկ գլուխ ունի իր Սուրբ Էջմիածնով. ուրիշ որեւէ հաստատում՝ կը բացայայտէ եկեղեցին պառակտելու եւ անոր հոգեւոր գերագոյն պետը վարկաբեկելու նկատում մը: Ուրեմն, Արամ կաթողիկոսին համար Յայաստանեայց եկեղեցին երկգլխանի անքնական մարմին մըն է:

Մետրոպ Սրբազան, իր կարգին, որ ամէն ըմբոստական շարժում եւ պառակտում կապկելու կիրքով տարուած է, Անթիլիասի տարազը պատշաճեցուցած է իր հաշիւներուն, իր հաղորդագրութիւններուն կցելով հետեւեալ ծանօթագրութիւնը. «Յայաստանեայց Առաքելական ուղղափառ եկեղեցին չորս նուիրապետական Աթոռներ ունի աշխարհի մէջ՝ Էջմիածին (Յայաստան), Անթիլիաս (Լիբանան), Երուսաղէմ (Սուրբ երկիր) եւ Իսթամպուլ (Թուրքիա), համապատասխանօրէն»:

Թէեւ «համապատասխանօրէնը» Պարոնեանի բացատրութեամբ կը թուի ըլլալ մեղմացուցիչ դէպք յանցանաց, սակայն օտար ընթերցողին համար ոչ մէկ բան կ'ըսէ, թէ ինչ է նուիրապետական կարգը այդ Աթոռներուն միջեւ:

Սրբազան Պապին մահուան առիթով պարզուեցաւ նաեւ Մետրոպ սրբազանի ուրիշ մէկ տարօրինակութիւնը, չըսելու համար սրբապղծութիւնը: Այդ գայթակղութիւնը բացայայտողը թուրք լրագրող Մեհմէթ Եըմազն է, որ «Միլիէթ» թերթի Ապրիլ 5-ի համարին մէջ կը գրէ. «9 նոյեմբեր 2000-ին Պապը, Էջմիածնի Գարեգին Բ.

կաթողիկոսին հետ համատեղ յայտարարութեան մէջ գործածեց Յայկական ցեղասպանութիւն բացատրութիւնը*:

Իսթամպուլի Յայոց Մետրոպ Սուրբազան պատրիարքը 12 նոյեմբերին նամակ մը դրկեց Պապին եւ ըսաւ, թէ աւելի լաւ կ'ըլլար որ իրենց կարծիքն ալ 2021-ի տարին անգամ մը, որովհետեւ Սուրբ գիրքը մեզի կը հրահանագէ մեր սիրտերէն նետել թշնամական զգացումները եւ խաղաղ կերպով ապրիլ միւս մարդոց հետ»:

Թուրք մամուլը սովորութիւնն ունի ստայօղ վերագրումներ կատարելու. սակայն, քանի Մետրոպ սրբազան ցարդ չէ հերքած իրեն եղած վերագրումը, ուրեմն պէտք է ենթադրել, որ ամէն չափ ու կշիռ կորսնցուցած այս մարդը իսկապէս կատարած է այդ սրբապիղծ արարքը:

Այդ արարքով Մետրոպ Սրբազան նախ իր ըմբոստութիւնը ցուցաբերած կ'ըլլայ իր մեծաւորին նկատմամբ, յետոյ ալ, Պապէն աւելի Աւետարանը ուսումնասիրած ըլլալու յաւակնութեամբ, կը պահանջէ Սրբազան Պապէն, որ իր կարծիքը առած ըլլար նման յայտարարութիւն մը ստորագրելէ առաջ՝ կարծէք բաւարար եղած չըլլար Ամենայն Յայոց Յայրապետին կարծիքը: Իսկ ամէնէն ահաւորը, Պապին կողմէ հարցուած չըլլալով հանդերձ ան որոշած է պարզել իր կարծիքը, խրատ տալով Պապին որ «սիրտէն դուրս նետէ թշնամական զգացումները»: Այսինքն՝ մեր նահատակները յիշելը «թշնամական» արարք մը կը նկատէ ան. թշնամութիւն՝ որո՞ւն նկատմամբ՝ ոճրագործներո՞ւն...

Մետրոպ Սրբազան կրնայ ամէն կարգի եւ տարօրինակութեան դիմել՝ հաճոյանալու եւ քծնելու համար թրքական իշխանութեանց, սակայն իրաւունք չունի այդ քծնանքը արտայայտելու մեր մեծ նահատակութեան հաշւոյն- թող հանգիստ ձգէ մեր մեռելները:

Ինչպէս կը տեսնուի՝ փոքր աւատապետութիւններ գոյացած են մեր եկեղեցւոյ ծոցին մէջ, եւ իւրաքանչիւր աւատապետ՝ մեր եկեղեցւոյ մէկ կտորին կառչելով կ'ուզէ մասնակիին թագաւորը դառնալ՝ փոխանակ ամբողջով զօրանալու եւ զօրացնելու եկեղեցին:

Չենք գիտեր ի՞նչ ըսին եւ ի՞նչ տեսան օտար եկեղեցական շրջանակները Պապին յուղարկաւորութեան առիթով պարզուած հայկական զաւեշտին մասին. մէկ բան պարզ է, որ բոլոր անոնք, որոնք անձնական կամ հատուածական մանր յաղթանակներու երազով փութացին Զոմ՝ Յայաստանեայց եկեղեցին իր ամբողջութեան մէջ պարտութեան մատնելու եւ տկարացնելու տխուր դեր մը կատարած եղան:

Անոնք որ կը մերժեն նուիրապետական կարգերը յարգել, իրաւունք չունին մեր ժողովուրդէն յարգանք ակնկալելու:

Արդէն անոնք դատուած են պատմութեան առջեւ:

Երեւան

** Եշտենք՝ Պապը երեւանում օգտագործեց «Մեծ եղեռն» արտահայտութիւնը, հայերէն:*